

ԱՆԱՎԱՐՏ ԿՅԱՆՔ

Ի Տեր հանգաւ Տիրան արքեպս. Ներսոյան

Կյանքից հեռացաւ Հայ Եկեղեցու ևս մի հաստաբեստ կաղնի: Գաղթի դաժան ճամփա՝ եղեռնյան իր սերունդի ապրած արհավիրքով: Հետո հույսի ծիլեր, եկեղեցական կրթություն և հաստատակամություն, տառապյալ ժողովրդին անսակարկ նվիրում՝ օրհասը ցրելու, վաղվա տեսիլքը պայծառացնելու ի խնդիր: Երիտասարդ հոգևորականի անսպառ եռանդ, ծառայասիրություն և կազմակերպչական կիրք, և 1958-ի հանկարծակի մեկուսացում եկեղեցական գործարար կյանքից, գիտական աշխատանք՝ որպես հոգու ափոփանք, բայց և ամերիկահայ գաղութը Հայ Եկեղեցու ավանդությամբ և հայեցի ոգով տոգորելու անհրաժեշտություն: Դարաձիգ մի կյանք, որ չճանաչեց ձանձրույթ և հուլություն, մերժեց պատեհապաշտություն և սակարկվող նվիրում, մանավանդ հավատարիմ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և զորավիգ նրա ավելի երիտասարդ գահակալին՝ Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոսին:

Եվ 1989 թվականի սեպտեմբերի առաջին օրերին Վեհափառ Հայրապետը ստացավ Տիրան արքեպիսկոպոսի մահվան գույժը: Անսպասելի և անժամանակ մահ. դեռ այնքա՜ն անելիք ուներ:

Նորին Սրբությունը Ամերիկայի հայոց արևելյան թեմի առաջնորդ Թորգոմ արքեպս. Մանուկյանին հղեց հետևյալ հեռագիրը.

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Նյու Յորք

Այս խորհրդավոր պահին, երբ Մայր Աթոռիս հավատարիմ Մեր եղբոր՝ Տիրան արքեպիսկոպոսի հոգին անցնում է դեպի մյուս ափը կյանքի, Մենք աղոթում ենք, որ բարին Աստված քաղցրությամբ ընդունի զայն հավիտենական լույսի աշխարհում:

Տիրան արքեպիսկոպոսը իր հավատավոր արտով, իր պայծառ իմացականությամբ ու իրեն հատուկ ոգեկանությամբ ավելի քան կես դար ծառայեց մեր Մայր Եկեղեցուն ու ժողովրդին ի Երուսաղեմ, ի Լոնդոն, և ի

Միացյալ Նահանգներ հոգեշեն եռանդով, անկոտրում բարոյական նկարագրով՝ իբրև մարտնչող Եկեղեցուն նվիրյալ զինվոր:

Սուրբ Էջմիածնից օրհնություն նրա վաստակին, նրա լույս հիշատակին:

Մեր խորին ցավակցությունն ենք հայտնում հանգուցյալ արքազան հոր սգակիր ընտանիքին և հարազատներին:

Կիրակի, 10 սեպտեմբերին, հանդիսավոր պատարագ և հոգեհանգիստ Միածնաէջ Մայր տաճարում:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
4 սեպտեմբերի 1989 թ.

Ապա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հետևյալ հեռագիրը հղեց Կոստանդնուպոլսի Պատրիարք Ծնորհք Գալուստյանին.

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ԾՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ

Կ. Պոլիս

Մխիթարված ենք, որ պիտի նախագահեք թաղման արարողությունները ի Տեր հանգուցյալ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան Մեր սիրեցյալ եղբոր:

Կխնդրենք ձեզմե, որ այս տխուր առիթով հաճեք ներկայացնել նաև Մայր Աթոռս և անձամբ Մեզ և աղոթեք անոր տառապյալ արդար հոգվո խաղաղության համար: Թող մեր Տերը բարյաց պարգևատու լուսավոր պահպանե Տիրան արքազանի բարի հիշատակը և անսասան ու միշտ պայծառ պահե մեր Մայր Եկեղեցին:

Վշտահար սրտով ու եղբայրական սիրո ողջագուրումով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
6 սեպտեմբերի 1989 թ.

Նյու Յորքի Ս. Վարդան Մայր տաճարում սեպտեմբերի 9-ին ամենապատիվ Ծնորհք Պատրիարք Գալուստյանի նախագահությամբ տեղի ունեցավ հանդիսավոր պատարագ և վերջին օծման արարողություն, ապա և թաղում: Հողին հանձնվեց բազմավաստակ մի հոգևորական, որ տեսիլք ուներ և ամբողջ գիտակցական կյանքը նվիրեց այդ տեսիլքին՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու պայծառացման:

Տիրան արքեպս. Ներսոյանը (ավազանի անունով Ներսես Թավուքճյան) ծնվել է Այնթապում (Կիլիկիա) 1904 թ. օգոստոսի 23-ին, քահանայի ընտանիքում: Նախակրթական ուսումը կիսատ թողած, մանուկ Ներսեսը իր ծնողների հետ բռնեց գաղթի ճամփան 1915 թ.: Անապատներում փոքրիկ աղջկանը կորցնելուց հետո, Տեր Ներսես Թավուքճյանը 1918 թվականին վերադարձավ Այնթապ:

1921-ին Երուսաղեմի Պատրիարք ընտրված Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի հետ, 17-ամյա Ներսեսը տեղափոխվեց Երուսաղեմ և ուսման մտավ Պատրիարքարանի հոգևոր դպրոցում: 1924-ին ավարտեց ուսումը և 1926-ին սարկավագ ձեռնադրվեց: Նա սկսեց դասավանդել նախակրթարանում՝ միաժամանակ օժանդակելով Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի «Ազգապատում»-ի երրորդ հատորի հետմահու հրատարակության աշխատանքներին:

1928 թ. հուլիսի 22-ին, ձեռամբ Եղիշե Պատրիարք Դուրյանի, ձեռնադրվեց կուսակրոն քահանա և վերանվանվեց Տիրան Ներսոյան: Հետո երկու տարի հետևեց աստվածաբանական ուսմանը: Երուսաղեմ վերադարձին ստանձնեց «Սիոն» ամսագրի խմբագրությունը, ապա և հոգևոր դպրոցի ուսուցիչ և տեսուչ: 1932-ին նշանակվեց Սուդանի հայոց հոգևոր հովիվ, ապա և 1934-ին՝ Մարսելի:

1938-ին Երուսաղեմից անցավ Փարիզ, որպես հայրապետական պատվիրակ: 1939-ին և երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում վարեց Լոնդոնի հայոց հոգևոր հովիվի պաշտոնը՝ գործունյա մասնակցությունը բերելով հայ համայնքի ներսում առկա հիտլերյան նվաճողներին ընդդիմադիր ուժերի պայքարին: Միաժամանակ մեծ աշխատանք ծավալեց բազմաթիվ հրատարակություններով Արևմուտքը ծանոթացնելու հայ ժողովրդի պատմությանը և հայ դավանաբանական-աստվածաբանական մտքի զարգացման ընթացքին:

1943-ին ընտրվեց ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ և 1945-ին, որպես Հյուսիսային Ամերիկայի պատգամավորության նախագահ, ժամանեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ մասնակցելու համար հոգելույս Գևորգ Զ Կաթողիկոսի ընտրությանը: Նորընտիր Կաթողիկոսը Տիրան ծայրագույն վարդապետին օծեց եպիսկոպոս:

ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդի պաշտոնում գերաշնորհ Տիրան եպիսկոպոսը ծավալեց հսկայական կրոնական և մշակութային աշխատանք. բազմաթիվ ձեռնադրություններ, եկեղեցաշինություն, թեմական կանոնադրություն, երգչախմբեր, երիտասարդական կազմակերպություն (Ամերիկայի Հայ Եկեղեցու Երիտասարդաց Կազմակերպություն):

1956 թվականին Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը ընտրվեց Երուսաղեմի պատրիարքության տեղակալ և 1957-ին՝ Պատրիարք Երուսաղեմի: Սակայն 1958 թ. ընդհատվեց նրա գործունեությունը, երբ հորդանանյան իշխանությունները ստիպեցին նրան հեռանալ Երուսաղեմից: Տիրան սրբազանը 1960-ին վերադարձավ Միացյալ Նահանգներ, հաստատեց Սուրբ Ներսես հոգևոր հաստատությունը, որի դասախոսն ու պատվավոր տնօրենն էր մինչև իր մահկանացուն կնքելը:

Տիրան արքեպիսկոպոսը Հայ Եկեղեցու անունից գործունյա մասնակցություն է ունեցել միջեկեղեցական էկումենիկ շարժման և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի աշխատանքներին:

Գերաշնորհ սրբազանը հեղինակել է բազմաթիվ հոդվածներ և գրքեր: «Յաւիտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: